

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԳԱՄՍԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(Ապրիլ 29 - Մայիս 1, 1999)

Գոհունակ սրտով իմացանք Ամերիկահայոց Արեւելեան թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանէն, որ Ապրիլ 29-Մայիս 1-ին Ուոթըրվիլի Նիւ Եորքի Ս. Պետրոս Հայոց եկեղեցւոյ մէջ պիտի գումարուի թեմիդ Տարեկան Պատգամատրական Ժողովը:

Մեր հայրական ջերմ սիրոյ ողջոյնն ու հայրապետական օրհնութիւնը կը յղենք Ժողովի բոլոր աստուածասէր եւ եկեղեցանուէր անդամներուն, որոնք այս օրերուն պիտի հաւաքուին՝ քննարկելու անցնող տարուայ գործունէութիւնը եւ կազմելու յառաջիկայ տարուայ աշխատանքային ծրագիրը:

Հայաստանեայց Եկեղեցին հայ ժողովուրդի հոգւոյն ծննդավայրն է. իսկ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ կենդանի հաղորդակցութիւնը՝ այդ հոգւոյն կենսունակութեան երաշխիքն ու գրուակները: Ուստի եւ Միածնաէջ Աթոռին վրայ կը մնանք աղօթող եւ գործող Հայ Եկեղեցւոյ պայծառութեան, անասանութեան, ինչպէս նաեւ անխախտ ու անալալիքի միութեան եւ միասնութեան համար:

Խորապէս վաւատի ենք, որ ձեր այս ժողովը երջանիկ առիթ մը պիտի ըլլայ անգամ մը եւս վերանորոգելու ձեր ուխտը՝ նուիրուած եւ բարեխղճօրէն աշխատելու, ձեռք ձեռքի տուած, եղբայրական անկեղծ զգացումներով տոգորուած եւ մանաւանդ մեր Սուրբ Եկեղեցւոյ աննուազելի շահերու գիտակցութեամբ: Այս յանձնառութեամբ է, որ անաղօտ ու լուսատու կը մնան հայոց պայծառ հաւատքը, հայ ոգեկանութեան հոգեւոր ու մշակութային արժէքներն այնպէս, ինչպէս մեզի աւանդեցին մեր լուսարմակ հայրերը:

Այսօր, երբ կրօնական ու բարոյական արժէքները փտանգատը շրջանէ մը կ'անցնին, մենք պիտի աներեք մնանք նահատակութիւններով սրբագործուած եկեղեցական-ազգային աւանդութեանց ապառաժին վրայ, առանց օրոշուելու նորաթուխ մակերեսային երեւոյթներէ: Ժամանակի ամենադառն սխալներէն է այն մօտեցումը, թէ ամեն նորութիւն յառաջդիմութիւն է. չկայ իրական յառաջդիմութիւն՝ առանց դարերու քրտինքով նուիրագործուած արժէքներու:

Մեր աղօթքն է, որ այս գիտակցութեամբ պայծառացած սկսիք ձեր գործունէութեան նոր շրջանը:

«Այսուհետեւ, եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել լեռուք ի գործս Տեառն յամենայն ժամ» (Ա Կորնթ. ԺԵ 58). Ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**